

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05
վիճակագրության պետական խորհրդի նիստի

10.04.2012թ.

ժ.13: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (Խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Ս.Դավթյան, Ա.Աղազարյան (Խորհրդի անդամներ)

Հ. Գրիգորյան (Խորհրդի քարտուղար)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Զ. Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի խորհրդական), Ա. Հայրապետյան (աշխատակազմի ղեկավար), Վ.Սարոյան (իրավաբանական բաժնի պետ), Լ.Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Լ. Քալանթարյան (աշխատանքի վիճակագրության բաժնի պետ):

Օրակարգի նախագծում՝ երեք հարց.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազայի «ԲԱԺԻՆ Գ. Զբաղվածություն» հատվածը ԱՄԿ գլխավոր գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Լ. Քալանթարյան/

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի թիվ 110-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Ա. Հայրապետյան/

3. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բվեարկության արդյունքները-կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազայի «ԲԱԺԻՆ Գ. Զբաղվածություն» հատվածը ԱՄԿ գլխավոր գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Լ. Քալանթարյան/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնին՝ ԱՄԿ գլխավոր գրասենյակին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազայի «ԲԱԺԻՆ Գ. Զբաղվածություն» հատվածը՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չիրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի թիվ 110-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Ա. Հայրապետյան/

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 110-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումը.

1. որոշմամբ հաստատված հավելված 1-ի

1) 13-րդ կետի դ) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ) օրենքով սահմանված կարգով պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում Ծառայության աշխատակազմի ղեկավարին, նշանակումներ է կատարում Ծառայության քաղաքացիական ծառայության բարձրագույն, ինչպես նաև գլխավոր պաշտոնների 1-ին

ենթախմբի պաշտոններում, նշանակում և ազատում է ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին և ստորաբաժանման մյուս աուդիտորներին»,

2) 48-րդ կետի դ) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում պաշտոնի (աշխատանքի) է նշանակում և պաշտոնից (աշխատանքից) ազատում Ծառայության աշխատակազմի քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոնների 2-րդ, 3-րդ ենթախմբերի, առաջատար և կրտսեր պաշտոնների աշխատողներին, ինչպես նաև աշխատակազմի քաղաքացիական ծառայող չհամարվող աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր, բացառությամբ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և ստորաբաժանման մյուս աուդիտորների.»:

/Նորմատիվ/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄԱՅԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ